ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/173

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26/26-1/10773-2021 գրությամբ Ա/Ձ Միհրան Աբրահամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 28.06.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1237-21 գրության հիման վրա, 01.07.2021թ. թիվ 26/26-1/10773-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Միհրան Աբրահամյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Միհրան Աբրահամյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Միհրան Աբրահամյանը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՄԻՀՐԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ Ա/Ձ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2021/173 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 28.06.2021թ.-ի գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր): Պատվիրատուն հայտնել է, որ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել է: Նշյալի հիմքով, Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով Պատվիրատուն գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1.1. Պատվիրատուն 10/06/2021թ.-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) և www.armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակել է թիվ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթի գնման առարկան է «Ընդհանուր շինարարական աշխատանքներ» (այսուհետև նաև՝ Գնման առարկա), Գնման առարկայի ԳՄԱ ծածկագիրն է «45461100/5»: Ըստ Մրցույթի՝ Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 1 944 900 (մեկ միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

1.2. 2021 թվականի ընթացքում մինչև Մրցույթը հայտարարելը՝ Պատվիրատուն Տեղեկագրում հրապարակել է թվով 4 գնման ընթացակարգ, որոնց գնման առարկաների ԳՄԱ ծածկագիրն է 45461100: Այդ ընթացակարգերի ծածկագրերն են՝ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-

21/29, ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/46, ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58 և ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69: Նշյալ գնման ընթացակարգերի գնման առարկաների նախահաշվային ընդհանուր գինը կազմում է՝ 84 437 725 (ութսունչորս միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր քսանհինգ):

1.3. Մրցույթը հրապարակելու պահին Տեղեկագրում հրապարակված Պատվիրատուի գնումների պլանում ներառված «45461100» ԳՄԱ ծածկագով Գնման առարկաների նախահաշվային ընդհանուր գինը կազմում էր 69 000 000 (վաթսունինը միլիոն) ՀՀ դրամ:

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված է, որ տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն. «4. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում. 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը). 3) պայմանագրի կնքում. 4) պայմանագրի կատարում և կառավարում:»:

Կարգի 16-րդ կետի համաձայն. «16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, (...)»

Կարգի 17-րդ կետի համաձայն. «17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է»:

Կարգի 20-րդ կետի համաձայն. «20. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝ 1) պատասխանատու

ստորաբաժանում, և 2) գնումները համակարգող 3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...)»

Կարգի 21-րդ կետի համաձայն. «21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ 1) կազմում և հաստատում է գնման հայտը, (...)»:

Վերոգրյալ նորմերից հետևում, որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է ունենալ՝ տվյալ գնման գործընթացի շրջանակներում ձեռքբերման ենթակա գնման առարկան պարունակող, սահմանված պահանջներին համապատասխան հաստատված ու Տեղեկագրում հրապարակված գնումների պլան, ընդորում՝ գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշմամբ: Այսպիսով, եթե նշյալ պահանջներին համապատասխանող գնումների պլանը Տեղեկագրում հրապարված չէ, ապա պատվիրատուն իրավունք չունի սկսել տվյալ գնման գործընթացը: Քանի որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացի կազմակերպման <u>իրավական հիմքը</u> սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և <u>Տեղեկագրում հրապարակված</u> գնման առարկան պարունակող գնումների պլանի առկայությունն է: Հետևաբար, եթե գնման գործընթացը կազմակերպվել է առանց սահմանված պահանջներին համապատասխան հաստատված գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակելու, ապա այդ գնման գործընթացը համարվում է կազմակերպված <u>վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի</u>, որպիսի պայմաններում այն չի կարող առաջացնել իրավաբանական հետևանքներ:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Մրցույթի հրավերի և հայտարարության տեքստը Տեղեկագրում հրապարակելու պահին, Տեղեկագրում հրապարակված գնումների պլանում ներառված «45461100» ԳՄԱ ծածկագով գնման առարկաների նախահաշվային ընդհանուր գինը կազմում էր 69.000.000 (վաթսունինը միլիոն) ՀՀ դրամ, մինչդեռ մինչև Մրցույթը Տեղեկագրում հրապարակված ընթացակարգերի գնման առարկաների նախահաշվային ընդհանուր գինը կազմում է՝ 84.437.725 (ութսունչորս միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ: Այսինքն՝ Մրցույթով ձեռքբերման ենթակա Գնման առարկան Մրցույթի հրապարակման պահին ներառված չէր Տեղեկագրում հրապարակված գնումների պլանում,

քանի որ Տեղեկագրում հրապարակված գնումների պլանում ներառված «45461100» ԳՄԱ ծածկագով գնման առարկաների նախահաշվային ընդհանուր գինը 15 437 725 ՀՀ դրամով (=84 437 725 - 69 000 000) ավելի ցածր էր, քան 09/06/2021թ.-ի դրությամբ Տեղեկագրում հրապարակված գնման ընթացակարգերով ձեռբերման ենթակա «45461100» ԳՄԱ ծածկագով գնման առարկաների նախահաշվային ընդհանուր գինը:

Վերոգրյալից կարող ենք եզրահանգել, որ Մրցույթը Տեղեկագրում հրապարակելու պահին Գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէր: Ինչից հետևում է, որ Մրցույթը կազմակերպվել է վերագրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում կարելի է փաստել, որ Մրցույթը կազմակերպվել է ոչ իրավաչափ: Նշյալից էլ հետևում է, որ Մրցույթից ածանցյալ գործողությունները՝ ինչպիսին է Մասնակցին Ցուցակում ընդգրկելուն ուղղված Պատվիրատուի գործողությունները, իրավաբանական ուժ չեն կարող ունենալ:

Ցանկանում ենք նաև նշել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մի շարք որոշումներ, որտեղ վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ կազմակերպված գնման գործընթացների շրջանակներում Ցուցակում մասնակցիներին ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մերժել է:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտ է կիրառել սույն դիրորոշման մեջ նշված Բողոքներ քննող անձի նախկինում կայացրած որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները, ու Մասնակցին Ցուցակում ներառելու Ընթացակարգը մերժել:

2.4. Ամփոփելով դիրքորոշման հիմքերը և փաստարկները, կարծում ենք, որ Պատասխանողը Մրցույթը անց է կացրել Օրենքով սահմանված կանոնների խախտմամբ, մասնավորապես՝ Պատասխանողը խախտել է՝ Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը և Կարգի 16-րդ, 17-րդ, 20-րդ ու 21-րդ կետերը:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ՄԻՀՐԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված»:

Ա/Ձ Միհրան Աբրահամյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/173 ընթացակարգի շրջանակներում 12.07.2021թ. ժամը 10:10-ին և 16.07.2021թ. ժամը

09:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.06.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1237-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի հունիսի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 11:00-ին տեղի է ունեցել ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Միհրան Աբրահամյան» Ա/Ձ-ի (ՀՎՀՀ՝ 84240001, հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Տիգրան Մեծի պ., շ. 8Ա, բն. 34, հեռ.՝ +374 98 586800, էլ. փոստի հասցե՝ abrahamyan.mihran@inbox.ru) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

✓ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է. բացակայում է ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:

✓ ծավալաթերթ-նախահաշվում բոլոր բաժինների մասով հաշվարկված կշիռի շեղումը գերազանցում է սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի չափը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 18.06.2021թ.-ին համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «Միհրան Աբրահամյան» Ա/Ձ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Միհրան Աբրահամյան» Ա/Ձ-ի կողմից 21.06.2021թ.-ին գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Միհրան Աբրահամյան» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Միհրան Աբրահամյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/173 ընթացակարգի շրջանակներում 12.07.2021թ. ժամը 10:10-ին և 16.07.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Միհրան Աբրահամյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 18.06.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Միհրան Աբրահամյանի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն Հավելված 1-ի թերի է, մասնավորապես՝ բացակայում է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80» ծածկագրով գնման

ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշվում բոլոր բաժինների մասով հաշվարկված կշռի շեղումը գերազանցում է սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի չափը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 18.06.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ 22.06.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Միհրան Աբրահամյանի կողմից սահմանված ժամկետներում չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2021թ. թիվ 26/26-1/10773-2021 գրությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 28.06.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1237-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Մասնակցի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը ***կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Միհրան Աբրահամյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 18.06.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Միհրան Աբրահամյանի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն Հավելված 1-ի թերի է, մասնավորապես՝ բացակայում է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը ինչպես նաև **<u>ծավալաթերթ-նախահաշվում բոլոր բաժինների մասով հաշվարկված կշռի շեղումը գերազանցում է սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի չափը:</u>**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 18.06.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ 22.06.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Միհրան Աբրահամյանի կողմից սահմանված ժամկետներում չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ</u>*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Մասնակիցը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկել, հետևաբար գտնում եմ, որ Ա/Ձ Միհրան Աբրահամյանը «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված այն հանգամանքին, որ Ընթացակարգը տեղեկագրում հրապարակելու պահին գնման առարկան պարունակող գնումների պլանը տեղեկագրում հրապարակված չի եղել: Ինչից հետևում է, որ Ընթացակարգը կազմակերպվել է իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում կարելի է փաստել, որ այն կազմակերպվել է ոչ իրավաչափ, հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից Մասնակցի դիրքորոշումը տրամադրվել է Պատվիրատուին, որին ի պատասխան վերջինս հայտնել է հետևյալը.

«Ի լրումն «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Միհրան Աբրահամյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով 28.06.2021թ-ին ներկայացված գրության, հայտնում ենք, որ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ21/80 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկան ս.թ. փետրվարի 1-ի դրությամբ ներառված է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հաստատված գնումների պլանում, որը հրապարակված է տեղեկագրում: Միաժամանակ, սույն գրությանը կից՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ս.թ. փետրվարի 1-ի դրությամբ հաստատված և հրապարակված գնումների պլանը՝ ընդգծելով տվյալ գնման առարկան, ինչպես նաև՝ տեղեկագրից արտատպումը»:

Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/80» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվելիք գնման առարկան ներառված է դեռևս 01.02.2021թ. տեղեկագրում հրապարակված գնումների պլանում, ինչն ինքնին հերքում է Մասնակցի կողմից վկայակոչված վերը շարադրված հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.07.2021թ. թիվ 26/26/10773-2021 գրությամբ Ա/Ձ Միհրան Աբրահամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Միհրան Աբրահամյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**